

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԲԱԶԵԼ 3-Ի  
ՆԵՐԴՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Վարդան ԲՈՍԱՆՁՅԱՆ**  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Հովհաննես ԳԵՎՈՐԳՅԱՆ**  
ԵՊՀ Տնտեսագիտության և Կառավարման  
ֆակուլտետի ասպիրանտ

Բանալի բառեր. վերահսկողություն, Բազելյան կոմիտե, Բազել 3, առևտրային բանկ, համակարգ, հսկողություն, իրացվելիություն, կապիտալի համարժեքություն

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը շարունակում է մնալ տնտեսության կարևոր ոլորտներից մեկը՝ մեծացնելով ֆինանսական ռեսուրսների տրամադրումը երկրի տնտեսությանը և ընդլայնելով իրական հատվածին մատուցվող ծառայությունների ցանկը: Այդպիսի կողմնորոշումը նպաստում է ՀՀ բանկային համակարգում մրցակցության մեծացմանը և տնտեսության իրական հատվածի զարգացմանը, բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման համար ստեղծելով որոշակի պայմաններ: Միևնույն ժամանակ վերջինիս լիարժեք ձևավորումը հնարավոր է միայն ֆինանսական հատվածի կարգավորման և վերահսկողության կայացած համակարգի դեպքում, որը ենթադրում է հսկողական գործառույթի շարունակական կատարելագործում և արդիական ստանդարտների մշակում ու ներդրում ինչպես բանկային համակարգի ֆինանսական վերահսկողությունն իրականացնող ՀՀ Կենտրոնական բանկում, այնպես էլ առևտրային բանկերի ներքին հսկողության ոլորտում:

Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեն ֆինանսական ճգնաժամից հետո ձեռնամուխ եղավ ֆինանսական համակարգի վերահսկողությանը վերաբերող ավելի արդյունավետ մոտեցումների մշակմանը և 2010 թվականին հանդես եկավ այդ ուղղությամբ առաջարկների նոր փաթեթով, որը, ըստ էության, պետք է փոխարինի Բազել 2-ով սահմանված ստանդարտներն ու գործելաձևերը: Ֆինանսական ճգնաժամը, փաստորեն, բացահայտեց ֆինանսական համակարգի հսկողության համակարգում առկա թերություններն ու ռիսկերը, որոնց կառավարման կատարելագործմանը և բացահայտված անկատարությունների վերացմանն էլ հենց ուղղված են Բազելյան կոմիտեի նոր պահանջներն ու առաջարկները: Բազել 2 և Բազել 3 համակարգերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նոր պահանջները հիմնականում միտված են բանկերի և բանկային համակարգի գործու-

նեության կարևորագույն երկու չափորոշիչների՝ կապիտալի և իրացվելիության պահանջների խստացմանը:

Բազել 3-ով սահմանված պահանջները բնականաբար իրենց արտացոլումը պետք է ստանային նաև ՀՀ բանկային համակարգում: Ելնելով դրանից, ինչպես նաև հաշվի առնելով հանրապետության բանկային համակարգի վերջին զարգացումները, Կենտրոնական բանկը շարունակաբար աշխատանքներ է իրականացնում ֆինանսական համակարգի և հատկապես բանկային վերահսկողության գործառույթի բարելավման և կատարելագործման ուղղությամբ: Դրանց հիմքում ընկած են Բազելյան կոմիտեի կողմից Բազել 3-ում առաջարկված մոտեցումները, որոնք ճգնաժամային պայմաններում էականորեն կնպաստեն Ֆինանսական համակարգի կայունության և ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը: Ընդ որում կոմիտեի կողմից առանձնացվել են չորս հիմնական գործոններ և Բազել 3-ում ներկայացվել են դրանց ազդեցության սահմանների կառավարմանը և վերջիններով պայմանավորված ռիսկերի մեծացմանն ուղղված միջոցառումներ: Ըստ բազելյան կոմիտեի, ֆինանսատնտեսական ճգնաժամի հիմնական պատճառ դարձան հետևյալ գործոնները.

- նորմատիվային կապիտալի ցածր աստիճանը,
- բանկերում նորմատիվային կապիտալի որակի անկումը,
- իրացվելիության ոչ բավարար մակարդակը,
- բանկերում կորպորատիվ հարաբերությունների կարգավորման և ռիսկերի կառավարման սուբյեկտիվ մոտեցումների առկայությունը:

Ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին բանկերը բախվեցին իրացվելիության լուրջ հիմնախնդիրների հետ և դրա ցածր մակարդակի պայմաններում ստիպված եղան տարերայնորեն վաճառել իրենց ֆինանսական ակտիվները, ինչը բերեց դրանց արժեզրկմանը՝ ավելացնելով բանկերի՝ առանց այն էլ մեծ չափերի հասած վնասները: Ծագած խնդիրները և դրանցով պայմանավորված երևույթները շրթայական ռեակցիայով մի բանկից փոխանցվեցին փոխկապակցված այլ ֆինանսական ինստիտուտներին, որոնք առաջացրին ավելի ծանր հետևանքներ՝ ճգնաժամին հաղորդելով համակարգային բնույթ: Այն արագորեն տեղափոխվեց տնտեսության իրական հատված՝ բերելով վարկավորման ծավալների սահմանափակման, իրացվելիության նվազման և, ի վերջո, տնտեսական անկման: Նշված խնդիրների վերացման նպատակով Բազելյան կոմիտեն հանդես եկավ առաջարկությունների նոր փաթեթով, որոնք ամրագրվեցին հետևյալ փաստաթղթերում՝

- Basel III: A global regulatory framework for more resilient banks and banking systems: June 2011<sup>1</sup>,
- Basel III: The Liquidity Coverage Ratio and liquidity risk monitoring tools: Jan 2013<sup>2</sup>,
- Basel III counterparty credit risk.

Ընդհանուր առմամբ, Բազել 3-ով առաջարկվող փոփոխությունները կարելի է դասակարգել վեց խմբերում, որոնց փուլ առ փուլ ներդրումը բանկային համակարգում նախատեսված է ավարտին հասցնել 2018 թվականին: Բազելյան կոմիտեի կողմից արված առաջարկների դասակարգումը ունի իմաստային հետևյալ ծանրաբեռնվածությունը:

1. Կապիտալի որակի պահանջների խստացում՝ կապիտալի տարրերի նկատմամբ ավելի խիստ պահանջների սահմանում և տարբեր տնտեսական իրավիճակներում բանկի կողմից իրականացվող գործողությունների սահմանափակում:

2. Կապիտալի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանում՝ կապիտալի բուֆեր, որը կստիպի բանկերին ճգնաժամային իրավիճակում ապահովել ավելցուկային կապիտալի որոշակի մակարդակ ճգնաժամային իրավիճակներում այն օգտագործելու նպատակով: Բանկերի նկատմամբ ավելցուկային կապիտալի այդպիսի մակարդակի ապահովումը չի կարող կրել պարտադիր բնույթ, սակայն վերոնշյալ բուֆերը չապահովելու դեպքում բանկը կենթարկվի չբաշխված շահույթը բաշխելու սահմանափակման: Որպես կապիտալի պահպանման բուֆերի սահմանաչափ է նախատեսվում 2.5 տոկոսը:

3. Փոքր կապիտալի դեպքում բանկերի կողմից մեծ չափերով ակտիվների ներգրավման սահմանափակում՝ Բազել 3-ով սահմանվում է լներեջի գործակից, որը իրենից ներկայացնում է կապիտալի և ակտիվների (ներառյալ հետհաշվեկշռային ակտիվների) հարաբերակցությունը: Գործակիցի նվազագույն մակարդակը նախատեսվում է 3 տոկոսի չափով: Ընդ որում, լներեջի գործակիցը չի փոխարինում կապիտալի համարժեքության գործակցին, այլ լրացնում է դրան:

4. Իրացվելիության նոր նորմատիվների սահմանում՝ 30-օրյա սթրեսային իրավիճակում բանկի իրացվելիության (LCR) և երկարաժամկետ հատվածում կայուն ֆինանսավորման ապահովման համար (NSFR): Ֆինանսական ճգնաժամն ի հայտ բերեց խնդիրներ իրացվելիության ոլորտում և ուղղակիորեն ցույց տվեց, որ իրացվելի համարվող ակտիվներն արագորեն կա-

---

<sup>1</sup> <http://www.bis.org/publ/bcbs189.pdf>

<sup>2</sup> <http://www.bis.org/publ/bcbs238.pdf> (Փաստաթղթի նախնական տարբերակը հրապարակվել է 2010թ. դեկտեմբերին կրելով՝ Basel III: International framework for liquidity risk measurement, standards and monitoring” անվանումը

րող են դադարել այդպիսին լինելուց և տնտեսական անկման պայմաններում կարող են իրացվել շուկայականից անհամեմատ ցածր գներով:

5. Համակարգային նշանակություն ունեցող բանկերի նկատմամբ ավելի խիստ պահանջների կիրառում՝ ավելի խիստ պահանջների կիրառման նպատակն է համակարգային բանկերի մոտ նվազեցնել անվճարունակ դառնալու հավանականությունը, իսկ եթե, այնուամենայնիվ, բանկը ճանաչվում է որպես այդպիսին, ապա նվազեցնել բացասական ազդեցության սահմանները: Բազելյան Կոմիտեի այս առաջարկությունները հետապնդում են համակարգային բանկերի և ֆինանսական ինստիտուտների տնտեսության վրա բացասական ազդեցությունները կանխարգելու նպատակ:

6. Գործընկերոջ նկատմամբ հնարավոր ռիսկի չափի սահմանափակում՝ գործընկերոջ վարկային ռիսկի գնահատման համար առաջարկվում են անհրաժեշտ մեթոդներ և մեխանիզմներ, որոնք թույլ կտան բանկին հսկել իր համար անմիջական գործընկեր հանդիսացող կազմակերպության ֆինանսական վիճակի հետ կապված ռիսկերը:

Բազել 3-ի առաջարկությունները, իհարկե, պարտադիր չեն որևէ երկրի բանկային համակարգի համար, սակայն դրանց կարևորությունը և նպատակահարմարությունը որևէ ֆինանսական կազմակերպության կողմից կասկած չի հարուցում, քանի որ դրանք հիմնված են միջազգային լավագույն փորձի վրա, որոնց կիրառումն, անշուշտ, ձեռնառու կլինի նաև Հայաստանի բանկային համակարգին: Բանկերի նկատմամբ հանրապետությունում գործող տնտեսական նորմատիվները և պահանջները շատ ավելի խիստ են, քան Բազել 2-ով սահմանվածները, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Բազել 3-ը մինչև 2018 թվականը ամբողջապես կներդրվի ՀՀ բանկային վերահսկողական համակարգում: ՀՀ Կենտրոնական բանկն արդեն իսկ սկսել է իրականացնել օրենսդրական փոփոխություններ Բազել 3-ի աստիճանական ներդրման ուղղությամբ: Մասնավորապես, փոփոխություններ են կատարվել բանկային օրենսդրությունը կարգավորող «Բանկային գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվներ» կանոնակարգ 2-ում, նոր խմբագրությամբ հաստատվել է «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ը, փոփոխություններ և լրացումներ են կատարվել կանոնակարգ 3-ում, որտեղ սահմանվում է հաշվետվությունների կազմման, ներկայացման և հրապարակման կարգը: Կանոնակարգ 1-ի նոր խմբագրությամբ բանկի դիլերը ճանաչվել է որպես դրա ղեկավար, որի նկատմամբ սահմանվել են որակավորման հատուկ կարգ՝ հետապնդելով նրանց մասնագիտական պատրաստ-

վածության մակարդակի բարձրացման նպատակ: Ծավալուն փոփոխությունները կատարվել են Կանոնակարգ 2-ում, մասնավորապես<sup>3</sup>

- հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (Ն<sup>11</sup> նորմատիվ) 2018 թվականի հունվարի 1-ից սահմանվում է 10 տոկոս,

- ընդհանուր կապիտալում նվազելու է լրացուցիչ կապիտալի սահմանաչափը, որը 2018 թվականից սկսած չի կարող գերազանցել հիմնական կապիտալի 20 տոկոսը,

- 2018 թվականից սկսած բանկի տնօրինության տակ գտնվող ոչ նյութական ակտիվներն ամբողջությամբ չեն ներառվելու բանկի հիմնական կապիտալի ցուցանիշի հաշվարկների մեջ:

- 2017 թվականից Հայաստանում առևտրային բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն մակարդակը սահմանվում է 30 մլրդ դրամ<sup>4</sup>:

Ամփոփելով, հարկ է նշել, որ ժամանակը ցույց կտա դիտարկված օրենսդրական փոփոխությունների ազդեցությունը բանկային համակարգի և իրական հատվածի վրա, իսկ տվյալ պահին կարելի է համակարծիք լինել ՀՀ բանկային համակարգի և ԿԲ ներկայացուցիչների հետ Բազելյան կոմիտեի առաջարկությունները հանրապետության բանկային համակարգ ներդնելու առումով, քանի որ տվյալ բնագավառում հարաբերությունները կարգավորելու նպատակով հանրապետությունում ձևավորած օրենսդրա-իրավական դաշտն արդեն իսկ բավարարում է Կոմիտեի կողմից մշակված առաջարկություններով պայմանավորված մի շարք պահանջներ: Տվյալ գործընթացում թերևս բացառություն պետք է համարել 2017 թվականից առևտրային բանկերի համար նվազագույն կապիտալի ավելի բարձր շեմ սահմանելու մասին ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված որոշումը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ Բազելյան կոմիտեի առաջարկները մշակված են միջազգային վերահսկողական և կարգավորման համակարգերի գործունեության առաջավոր փորձի հիման վրա և ուղղված են դիտարկվող բնագավառում ծագած խնդիրների լուծմանը: Պետք է նշել նաև, որ Բազել 3-ի առաջարկների կենսագործումը մեծապես կնպաստի ՀՀ բանկային համակարգ միջազգային ստանդարտների ներդրմանը և կբարձրացնի արտասահմանյան երկրների, միջազգային ֆինանսական կազմակերպությունների և, որ

<sup>3</sup> ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվներ կանոնակարգ 2-ը նոր խմբագրությամբ հաստատելու մասին Տես՝ [www.arlis.am/documentview.aspx?docid=17631](http://www.arlis.am/documentview.aspx?docid=17631)

<sup>4</sup> Այս փոփոխությունը կհանգեցնի շուրջ 8-12 բանկերի կոնսոլիդացման, քանի որ այս պահի դրությամբ բանկերի մեծամասնությունը չի բավարարում 2017 թվականին ուժի մեջ մտնող նվազագույն կապիտալի պահանջին:

ամենակարևորն է, օտարերկրյա ներդրողների վստահությունը Հայաստանի Հանրապետության նկատմամբ:

**Վարդան ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, Հովհաննես ԳԵՎՈՐԳՅԱՆ**  
**Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում ԲԱՋԵԼ 3-ի ներդրման առանձնահատկությունները**  
*Բանալի բառեր. վերահսկողություն, Բազելյան կոմիտե, Բազել 3, առևտրային բանկ, համակարգ, իրացվելիություն*

Հոդվածը նվիրված է Բազելյան կոմիտեի կողմից մշակված առաջարկությունները ՀՀ բանկային համակարգ ներդնելու հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Աշխատանքում իրականացվել է Բազել 2-ի և Բազել 3-ի համեմատական վերլուծություն և ՀՀ բանկային համակարգի վրա Բազել 3-ի ներդրման ազդեցության գնահատում:

**Вардан БОСТАНДЖЯН, Оганес ГЕВОРГЯН**  
**ОСОБЕННОСТИ ВНЕДРЕНИЯ БАЗЕЛЬ-3 В БАНКОВСКОЙ СИСТЕМЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ**  
*Ключевые слова: контроль, Базельский комитет, Базель-3, коммерческий банк, система, ликвидность*

Статья посвящена изучению проблем внедрения рекомендации базель 3 в банковской системе Армении. В работе был проведен сравнительный анализ между Базель 2 и Базель 3 и была осуществлена оценка воздействия базеля 3 на банковской системе Армении

**Vardan BOSTANJYAN, Hovhannes GEVORGYAN**  
**PECULARITIES OF IMPLEMENTING BASEL 3 IN ARMENIA'S BANKING SYSTEM**  
*Key words: control, Bazel Committee, Bazel-3, commercial bank, system, liquidity*

The article is dedicated to study of issues of implementation of Basel 3 in banking system of Armenia. Comparative analysis has been carried out between Basel 2 and Basel 3, as well as estimate has been done in evaluation of implementation of Basel 3 recommendations in banking system of Armenia.